



17 (172). ԲԱՐԵՐԱՐ ԳԵԼ

Անոթի դել կը տեսնա՝ լապստրակ մե մըջ քրտընքին հմա՛լ կը փախնի, կըսիս աշխարհընցում է: Ձեն կիտա:

— Լա՛պստրա՛կ, լա՛պստրա՛կ, կա՛նի, էդ յո՛ւր հմլա լեղա-սլատառ կը փախնիս:

— Ի՞նչ էնիմ, դել փաշա, խեղճ գեղացի իմ, ոես աղվեսն հըտ ընձի չընկավ հակառ՝ գուգեր սպաներ, ես լե՛ կնիկ-ճժու տեր, զիմ ոլուխն առա փախա, բալքի ազատիմ:

— Դու տես, է՛,— կըսե գել,— խե՛ղճ է գտի, կա՛նի ես ըդրա բուրդ բարերար կը հանիմ, ա՛րի իմ մոտ, ա՛րի, քանի ես կամ՝ մարդ չը դալի քու մաղին:

Լապստրակ կավտնա, կ՛րթա մոտ, օր կէրթա, գելն հա՛փ՝ ղըդոր կը բոնե, փառավոր ճաշ՝ մե կէնե, զբերան կը սրբե, զաչքեր կուղղե՛ էրկինք, կըսե.

— Գոհանա՛մ քենե՛, տե՛ր, չըսօր լե բարերարութեն էրի, հմա օր լապստրկու հիշատակ չը կորի՛ վըր գերեզմնին գրել պտի տամ. «Գիլու անունն է չելի, աղվեսն է քանդի զաշխար»:

¹ Քեզանից (Մ. Բ.):

